ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

‹‹Բուհ–գործատու համագործակցության եզրեր›› խորագրով աշխատաժողովին հրավիրված գործատուների շրջանում անցկացված հարցումների

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և մրցունակ կրթական ծառայություններ մատուցելու նպատակով ՀՖԿՍՊԻ-ն 2018թ. մարտի 28-ին կազմակերպել է ‹‹Բուհ–գործատու համագործակցության եզրեր›› խորագրով կլոր սեղան–քննարկում, որի ընթացքում հանդիպմանը մասնակցած 11 գործատուների կողմից կրթական ծրագրերի վերանայման վերաբերյալ լրացված հարցաթերթիկների հիման վրա կատարվել է հետազոտություն:

Նշված աշխատաժողովին մասնակցել են արտաքին շահակիցներ, այդ թվում գործատուներ հետևյալ կազմակերպություններից՝ №196 հիմնական դպրոց, Երևանի պետական համալսարան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն, Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ, Արաբկիր Բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, «Ալտմեդ» վերականգ-նողական և ավանդական բժշկության կլինիկա, Երևանի Շենգավիթ համալիր մարզաձևերի ՄՊՄԴ ՀՈԱԿ, Հայկական հատուկ օլիմպիադաներ ՀԿ-ն ներկայացուցիչներ:

Հարցման նպատակն էր ճիշտ գնահատել ուսումնական գործընթացների կազմակերպումն ու շրջանավարտների մասնագիտական կարողությունը: (Հավելված 1): Աշխատաժողովին հրավիրված գործատուներից 2–ի մոտ բուհի շրջանավարտները ոչ միայն աշխատում են, այլև սովորում և պրակտիկա անցնում: Մնացած 9-ը հաստատություններում 2018 թվականի դրությամբ աշխատում են ինստիտուտի 94 շրջանավարտներ: Ըստ հարցման արդյունքների՝ ՀՖԿՍՊԻ–ի շրջանավարտներին կազմակերպությունների աշխատանքային պահանջներին համապատասխանելու համար անհրաժեշտ է 1-6 ամիս:

Հարցվող գործատուների 90,5%–ը ապահովում է վերապատրաստման հնարավորություն իր աշխատակիցների համար: Նրանցից 37%–ը գիտելիքի, հմտությունների պակասի խնդիրը լուծում է վերապատրաստումների միջոցով:

63%–ը կարծում է, որ գիտելիքի և հմտությունների պակասը աշխատակիցները կարող են լուծել համատեղ դասընթացների, միջոցառումների, գործնական պարապմունքների և պրակտիկայի միջոցով(գծապատեր 1):

Գծապատեր 1



Գործատուների միայն 82%-ն է պատասխանել այն հարցին, թե վերապատրաստումները որտեղ են անցկացվում: Նշված պատասխանների 45%–ը վերաբերում է կազմակերպությունում անցկացվող վերապատրաստումներին, 12%–ը՝ կազմակերպությունից դուրս անցկացվող վերապատրաստումներին, իսկ 43%–ը աշխատակիցներին վերապատրաստում է և՛ կազմակերպության ներսում, և՛ նրանից դուրս:

Շրջանավարտների տեսական, գործնական, մասնագիտական որակները գնահատել են հարցվողների 64%-ը՝ 7 գործատու: Գնահատել են 0-10 միավորներով, որտեղ 0-6 միավորները ձևավորել են ցածր սանդղակը, 7-10 միավորները՝ բարձր սանդղակը: Շրջանավարտն աշխատակիցների՝ տեսական, գործնական և մասնագիտական գիտելիքները, հարցվողները գնահատել են հետևյալ կերպ. բարձր գնահատական են տվել՝ տեսական՝ 55%, գործնական՝ 45%, մասնագիտական՝ 71%: Ցածր գնահատականների պատկերն այսպիսին է՝ տեսական՝ 45%, գործնական՝ 55%, մասնագիտական՝ 29%: (Գծապատեր 2)

Գծապատկեր 2



ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտ աշխատողների աշխատանքային գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անձնային հատկանիշները (հաղորդակցվելու

մշակույթ, խմբում աշխատելու ունակություն, պատասխանատվություն ստանձնելու կարողություն, աշխատանքային կարգապահություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն) գնահատել է գործատուների 64%-ը՝ 7 հոգի: Գնահատել են 0-10 միավորներով, որտեղ 0-6 միավորները ձևավորել են բացասական սանդղակը, 7-10 միավորները՝ դրական սանդղակը: Գնահատման ամբողջական պատկերը %-ով այսպիսին ՝ 26%-ը տվել է ցածր գնահատական, իսկ 74%–ը՝ բարձր: (Գծապատեր 3)

Գծապատեր 3



Գործատուների 45%-ը հավասար պայմաններում կարևորում են շրջանավարտ աշխատողների կրթական աստիճանը կամ գիտական կոչումը, իսկ 55%-ը դրան կարևորություն չի տալիս:

Տարբեր կրթական աստիճան ունեցող շրջանավարտ աշխատակիցների միջև գործատուների 27,5%-ը տարբերություն տեսել է, տարբերություն չի տեսել 27,5%-ը և մասնակի է տեսել տարբերություն 45%-ը:(Գծապատեր 4):

Գծապատեր 4



Հարցման մասնակից գործատուների ներայացուցիչների 64%-ը՝ 7 գործատու, ՀՖԿՍՊԻ-ում պատրաստված մասնագետների մոտ՝ որպես առավելություն և թերություն առանձնացրել են հետևյալը՝

Առավելություններ	Թերություններ
1.Գիտելիք և կարողություն	1.Հեգնական վարքը
2.Թիմային աշխատանքի և ստեղծարար մոտեցումներին հակված լինելը	2.Ծխելը
3.Ֆիզիկական պատրաստվածությունը	3.Փորձի պակասը
4.Հստակ գիտակցում և պատկերացնում է իր առջև դրված խնդիրները	4.Պրակտիկայի պակասը
5.Պատասխանատվության զգացումը	5.Լեզուների չիմացությունը
6.Հարգալից վերաբերմունքը	6.Հմտությունները տեսականորեն չիմնավորելը

Հրավիրված գործատուներից բոլորը համագործակցում էին ՀՖԿՍՊԻ- ի հետ: Նրանցից միայն մեկի կազմակերպությունն էր, որ այլ բուհերի հետ նույնպես համագործակցում էր: ՀՖԿՍՊԻ-ի հետ համագործակցության արդյունավետությունը 0-10 միավորով գործատուները գնահատել են հետևյալ կերպ՝ (Գծապակեր 5):



Գործատուների 100%-ը պատրաստվում է շարունակել համագործակցությունը ՀՖՍԿՊԻ-ի հետ:

Շրջանավարտների որակը բարձրացնելու համար գործատուները ներկայացրել են հետևյալ առաջարկությունները՝

- Շատացնել պրակտիկ գիտելիքների քանակը:
- Ավելացնել պրակտիկայի ժամերը:
- Կարևորել ուսումնական պրակտիկան՝ երկարացնելով ընթացքը, հագեցնելով ծրագիրը և իրականացնելով մոնիթորինգ:

- Պրակտիկայից մաքսիմալ մեծ օգուտ քաղել:
- Տարին 1 անգամ մարզիկների համար սեմինար պարապունքներ իրականացնել՝ հոգեբանության, ֆիզոլոգիական, կենսամեխանիկական, մանկավարժական առանձնահատկությունների վերաբերյալ:
- Գիտահետազոտական բաղադրիչի ուժեղացում:
- Ուժեղացնել դպրոց -ՀՖԿՍՊԻ կապը:
- Ավելացնել պրակտիկ դասերի քանակը:

Ելնելով մեր կատարած հարցումների վերլուծության արդյունքներից՝ կարելի է եզրակացնել՝

1. Ինստիտուտի շրջանավարտ աշխատակիցների մասնագիտական որակները ցածր են:
2. ՀՖԿՍՊԻ–ի շրջանավարտ աշխատակիցների աշխատանքային գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անձնային հատկանիշները բարձր են:
3. Շրջանավարտներին պակասում է փորձը և պրակտիկան:
4. Շրջանավարտ աշխատողները չունեն օտար լեզվի իմացություն, որն էլ ենթադրում է աշխատանքում դժվարությունների առկայություն:
5. Բոլոր գործատուները պատրաստվում են շարունակել համագործակցությունը ՀՖԿՍՊԻ–ի հետ:
6. Ուսման և շրջանավարտների մասնագիտական որակը բարելավելու համար բուհը պետք է ավելացնի՝ պրակտիկ գիտելիքների, պրակտիկայի ժամերի, պրակտիկ դասերի քանակը:
7. Շրջանավարտ աշխատակիցների մոտ նկատվել է «փափուկ հմտությունների» պակաս հատկապես միջանձնային հաղորդակ¬ցությունների տեսանկյունից:

Առաջարկություններ

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ Պրակտիկայի և կարիերայի բաժինը և ՈԱԲ-ը ներկայացնում են հետևյալ առաջարկությունները, որոնք կարող են նպաստել ինստիտուտի ուսումնական գործընթացների կազմակերպման բարելավմանը և ուսանողների հմտությունների լավացմանն ու խորացմանը:

1. Բուհում ավելացնել փորձնական դասերի քանակը և երկարացնել ուսանողների պրակտիկայի ընթացքը:
2. Ապագա մասնագետների հետագա մասնագիտական գործունեությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ՀՖԿՍՊԻ–ում ավելացնել լեզվի դասերի ժամաքանակը:

Հավելված 1

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի գործընկեր.

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը իրականացնում է մասնագիտական կրթական ծրագրերի գնահատում և վերանայում: Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և մրցունակ կրթական ծառայություններ մատուցելու նպատակով ինստիտուտը ուսումնասիրում է իր հիմնական շահակիցների կարծիքը բուհում իրականացվող ուսումնական գործընթացների կազմակերպման և շրջանավարտների որակի վերաբերյալ:

Մեզ համար կարևոր է Ձեր անկեղծ կարծիքը և նախապես շնորհակալ ենք համագործակցելու և հարցաթերթիկի լրացմանը ժամանակ տրամադրելու համար:

Ընդհանուր տեղեկություններ

1. Ձեր կազմակերպության անվանումը

   _____

2. Կազմակերպության հասցեն

   _____

3. Կազմակերպության հիմնադրման տարեթիվը _____
4. Կազմակերպության աշխատակիցների ընդհանուր թիվը _____
5. Ո՞ր սեկտորում է գործում կազմակերպությունը /պետական, մասնավոր, հասարակական
6. Կազմակերպության գործունեության հիմնական ոլորտը

   _____

7. Ձեր պաշտոնը

   _____

8. Ձեր աշխատանքային փորձը _____

<u>Գործատուի կարծիքը ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտի վերաբերյալ</u>

9. ՀՖԿՍՊԻ-ի քանի՞ շրջանավարտ է աշխատում Ձեր կազմակերպությունում

   _____

10. Որքա՞ն ժամանակ է պահանջվում ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտին ձեր կազմակերպության աշխատանքային պահանջներին համապատասխանեցնելու համար _____

11. Ինչպե՞ս եք լուծում գիտելիքի կամ հմտությունների պակասի խնդիրը

    _____

12. Կարողանու՞մ եք ապահովել Ձեր աշխատակիցների համար վերապատրաստման հնարավորություններ /Այո, Ոչ, Երբեմն/

13. Եթե այո, ապա ինչպե՞ս եք կազմակերպում վերապատրաստումը.
    կազմակերպությունում կազմակերպությունից դուրս

    այլ _____

14. Եթե Ձեր կազմակերպությունում առկա են ՀՖԿՍՊԻ-ի՝ վերջին 3 տարիների շրջանավարտներ, ապա ինչպիսի՞ տարբերություններ եք նկատել նրանց մասնագիտական որակների առումով:

    _____

    _____

15. Ինչպե՞ս կգնահատեք ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտի մասնագիտական որակները /գնահատեք 0-10 միավորով/.
    - տեսական գիտելիքները ___
    - գործնական կարողությունները ____
    - մասնագիտական հմտությունները ____

16. Ինչպե՞ս կգնահատեք ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտի աշխատանքային ֆունկցիաների իրականացման համար անհրաժեշտ անձնային հատկանիշները /գնահատեք 0-10 միավորով/.
    - հաղորդակցվելու մշակույթ _____
    - խմբում աշխատելու ընակություն_____
    - պատասխանատվություն ստանձնելու կարողություն _____
    - աշխատանքային կարգապահություն _____
    - ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն _____
17. Հավասար պայմաններում կարևորում ե՞ք շրջանավարտի կրթական աստիճանը կամ գիտական կոչումը / Այո, Ոչ /։
18. Փաստացի տարբերություններ նկատել ե՞ք տարբեր կրթական աստիճան ունեցող շրջանավարտների միջև / Այո , Ոչ, Մասնակի/
19. Կարո՞ղ եք նշել ՀՖԿՍՊԻ-ում պատրաստված մասնագետների մի քանի.

    Առավելություններ

    _____

    Թերություններ

    _____

20. Ինչպիսի՞ քայլեր կառաջարկեիք ձեռնարկել ՀՖԿՍՊԻ-ի ղեկավարությանը շրջանավարտների որակը բարձրացնելու համար

    _____

    _____

<u>ՀՖԿՍՊԻ-ի հետ համագործակցելու հնարավորությունները</u>

21. Ունեցե՞լ եք արդյոք ԲՈՒՀ-երի հետ համագործակցության փորձ / Այո Ոչ/:
22. Ունեցե՞լ եք արդյոք ՀՖԿՍՊԻ-ի հետ համագործակցության փորձ /Այո Ոչ/:
23. Եթե այո, ապա գնահատեք համագործակցության արդյունավետությունը 0-10 միավորով:

1	2	3	4	5	6	7	8	9	10

24. Պատրաստվում եք արդյո՞ք շարունակել համագործակցությունը / Այո Ոչ /:

Շնորհակալություն համագործակցության համար